
ՍԵՐՆԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՎԱԳՅԱՆ Ք. Ռ.

Մերնդափոխությունը մոտավորապես 20-25 տարին մեկ տեղի ունեցող գործընթաց է: Դասական հայ սփյուռքը՝ որպես Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենագրված և աշխարհով մեկ սփռված հավաքականություն, արդեն թևակոխել է չորրորդ-հինգերորդ սերունդը, որը, մասնավորապես Արևմուտքի երկրներում, վերասերվում է առավելապես օտար ամուսնությունների հետևանքով ծնված խառնածին, հետևաբար և պարբերաբար փոխակերպվող ու տարաշերտվող ինքնությամբ, օտարախոս, օտարացած հավաքականության՝ իր ազգային պատկանելության խորհրդանշական, հաճախ՝ անորոշ կամ սոսկ հանրահաշվական ընկալմամբ (2/4-ով, 3/4-ով, 3/5-ով, 4/5-ով հայ և այլն):

Օտարության մեջ **խառնամուսնություններն** անխուսափելի են, և դրանք կասեցնել ի վիճակի չեն ոչ ամենագորավոր եկեղեցին, ոչ ամենաազգային կուսակցությունները, ոչ ազգային դպրոցը, ոչ մամուլը, ոչ ընտանիքը: Ինչպես Լևոն Շանթն է բնութագրել. «Խառնագգի ընտանիքը Բաբելոն մըն է՝: Եվ այսօր մեր հայ սփյուռքի գերակշիռ մասը փաստացի ապրում և գործում է այդ Բաբելոնի մեջ՝ հիմնականում չուզենալով գիտակցել, որ հետզհետե կտրվում և ընդմիջտ կտրվելու է իր ազգային արմատներից, Հայրենիքից»:

Ներկայիս գրքով միջավայրում գործող սփյուռքահայ զանգվածային լրատվության մեջ այդ փաստը թերևս չի շոշափվում, չի ահազանգվում, ցանկալի չէ, ընդհակառակը՝ ներհամայնքային օրախնդիր հարցերն այլևս ինքնահոսի են թողնված, փոխարենը նախընտրելի է դարձել ներհայաստանյան զարգացումների վրա գերազանցապես արևմտյան տերությունների դիտակետից, հետևաբար և՛ կողմնակալ անդրադարձներ կատարելը: Այդ ամենը, անշուշտ, նպատակ է հետապնդում արտերկրի հայության շրջանում սառեցնել, բթացնել Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախ) նկատմամբ հայրենասիրական զգացումները, սփյուռքը գաղափարապես անջրպետել հայրենի երկրից, հետևաբար և կանխել, բացառել սփյուռքը վերահաս ձուլումից փրկող թերևս միակ միջոցը՝ հնարավոր հայրենադարձությունը: Եվ կամ՝ Միրիայի երկարատև ու կործանարար պատերազմի պայմաններում անգամ ավերակված ազգային կառույցները վերականգնելու, վերաշինելու կոչեր են հնչում՝ «որդեգրած երկիրը» («սիրիական հայրենիք») արժեքային առումով հաճախ Հայրենիքից գերազնահատելու միտումով: Ցավոք, վիճակը նույնն է նաև այլ համայնքներում, որտեղ ժամանակի ընթացքում չբացառվող նմանատիպ կամ այլ իրադարձությունների զարգացման ու ծավալման պայմաններում Հայրենիք վերադարձը մնում է

¹ Լևոն Շանթի երկերը, հ. 5, Պէրուրթ, 1948, էջ 52:

² Նույնիսկ այն պարագայում, երբ Քուվեյթը Իսլամական գթասիրական կոմիտեի (Committee for Islamic Charity) միջոցով նյութական զգալի՝ 100 հազար դոլար, աջակցություն է ցուցաբերել Հայաստանում հանգրվանած սիրիահայերին [<http://news.am/eng/news/130510.html> (Kuwait to Allocate \$100,000 to Syrian Armenians in Armenia, November 29, 2012)], քաղաքական-կուսակցական հատվածական գաղափարախոսությունը այսօր ևս սփյուռքի առանձին շրջաններին հեռու է պահում դեպի Հայրենիք կողմնորոշվելուց՝ նախապատվությունը տալով արտերկրի հայությանը օտարության մեջ «հայրենիքներ վերակառուցելու» անհեռանկար և իմաստազուրկ գործունեությամբ զբաղեցնելուն, մինչդեռ Հայրենիքը՝ ՀՀ-ն ու ԼՂՀ-ն, իր գավակների անսակարկ աջակցության կարիքն ունի:

սակարկելի. առավելապես նախընտրությունը տրվում է օտար եզերքներում հանգրվանելուն (աչքի առաջ է Բրաքից, Եգիպտոսից, Միրիայից հեռացած և հեռացող հայության պարագան)³: Այսինքն, սուբյեկտիվ դրդապատճառներից էլնելով՝ աստիճանաբար փորձ է արվում անտեսել, մոռացության մատնել նույնիսկ այն իրողությունը, թե պատմաքաղաքական ինչ հանգամանքների (ցեղասպանություն, հայրենագրկում) հետևանքով են սփյուռքի մեր հայրենակիցների նախնիները հայտնվել օտար վայրերում: Սույնով անիմաստ, էթե չասենք՝ ի չիք է դառնում նաև (Հայ դատի պայքարն արթուն պահելու առաջնահերթությունից էլնելով) «սփյուռքը պահելու» պարբերաբար հնչեցվող տեսակետը:

Այդ ամենի հետևանքով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում առկա՝ բացառապես մահմեդական միջավայրի ազդեցությամբ տակավին հայապահպանված հայությունը, Արևմուտքի առավելապես «քրիստոնեական» և գերազանցապես «ազատական» իրականության մեջ հայտնվելով, բազմաթիվ ու բազմապիսի ընտրություններ ունենալով և ազգային կառույցների հետ քիչ թե շատ առնչվելով (էթե, իհարկե, սերունդները տակավին առնչվում են. դա կախում ունի կրոնադավանական բազմազանությունից, սոցիալ-մշակութային միջավայրից, արագընթաց համահարթեցնող համաշխարհայնացումից, անհատական գործոնից և այլն), մի որոշ ժամանակ դեռ կարող է պահպանել իր ազգային ինքնության ու ազգային ինքնագիտակցության տարրերը, սակայն իրար հաջորդող սերնդափոխությունն ու այլթնիկ խառնամուսնությունները, մայրենի լեզվի խորհրդանշական իմացությունը կամ ընդհանրապես կորուստը, Արևմուտքի հայությանը գիտակցական հայից հետզհետե վերածել, վերածում և շարունակելու են վերածել «սինվոլիկ»՝ զգացական հայության⁴, ապա նաև՝ «ձուլված, համահարթեցված» հավաքականության (տե՛ս աղ. 1, 2):

³ Բոլորովին վերջերս՝ 2012 թ. նոյեմբերի 11-ին, ԱՄՆ-ի կառավարությունը, արձագանքելով չորս երևելի ամերիկահայ իրավաբանների դիմումին, վերանայել է նախկինում Հայրենիքի անվտանգության (Homeland Security) բաժանմունքի Միացյալ Նահանգների Քաղաքացիության և ներգաղթի ծառայության (ՄՆՔՆԾ) (U.S. Citizenship and Immigration Services - USCIS) որոշումը սիրիահայերին սուկ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակ» (Temporary Protected Status - TPS) տրամադրելու մասին և արտոնել է սիրիահայերին «Իրավագրկության վիզա» (Visa Waivers) շնորհել [[http://www. centerarnews.com/](http://www.centerarnews.com/)] (Center for Armenian Remembrance. Press Release, November 12, 2012. U. S. Government responds to Prominent Armenian-American Lawyers call upon U. S. Government to issue visa waivers for Syrian-Armenians): Շատ չանցած՝ նրանց անհաշիվ բարեկամներն ու հարազատներն ԱՄՆ-ից և այլ վայրերից իրենց աջակցությունն են հայտնել Միացյալ Նահանգների կառավարությանը սիրիահայերին ԱՄՆ մուտք գործելու դյուրություն ապահովելու համար: Մինչդեռ հարկ էր, որ սփյուռքահայությունը միասնականություն դրսևորեր, որպեսզի տևական պատերազմի հետևանքով ավերվող Միրիայից մեր հայրենակիցների տեղափոխումն ու բնակեցումն իրականանար ՀՀ-ում և ԼՂՀ-ում՝ տեղական իշխանությունների գործունեությանը զուգընթաց, այլ ոչ թե՛ ԱՄՆ-ում, ինչպես նաև նյութական զգալի աջակցություն ցուցաբերվեր արտերկրի մեր հայրենակիցներին Հայրենիք տեղափոխելու, տեղավորելու և նրանց զբաղվածությունն ապահովելու համար:

⁴ **Bakalian A.** *Armenian-Americans: From Being to Feeling Armenian.* New Brunswick, London, 1993, pp. 393-396.

**Խառնամուսնությունների շարժընթացի ընդհանուր պատկերը
Հայոց ցեղասպանութունից փրկված սփյուռքի Հայերի
իրար հաջորդող սերունդների շրջանում**

Սերունդները արևելյան երկրների Հայ Համայնքներում	Ներազգային ամուսնություններ	Խառնամուսնություններ
I սերունդ	100%	0%
II սերունդ	100%	0%
III սերունդ, (արթնացող 1960/1975-ական թթ., ԱՍԱԼԱ)	95%	5%
IV սերունդ	90%	10%
V սերունդ	85%	15%

Աղյուսակ 2

Սերունդները արևմտյան երկրների Հայ Համայնքներում	Ներազգային ամուսնություններ	Խառնամուսնություններ
I սերունդ	100%	0%
II սերունդ	80%	20%
III սերունդ (օտարախոս, սիմվոլիկացող)	50%	50%
IV սերունդ (օտարախոս, սիմվոլիկացող)	30%	70%
V սերունդ (օտարացած)	15%	85%

Ի դեպ, ժամանակի ընթացքում միննույն «համահարթեցման», «սիմվոլիկացման» անխուսափելի ընթացքն է սպասվում նաև նորանկախ Հայաստանից արտագաղթած հայերին, որոնք դեռևս ապրում են օտարության մեջ համայնքային կյանքում ներգրավ-վելու կամ իրենցը ստեղծելու նախասկզբնական՝ «ռոմանտիզմի» ժամանակաշրջանում (առաջին և երկրորդ սերունդ), այսինքն, երբ հույս ունեն, որ ինչ-որ չափով առնչվելով արդեն իսկ գոյություն ունեցող ազգային կառույցների հետ

կամ հիմնելով նորերը՝ մասնավորապես արևելահայկական, կամ՝ բացառապես հայեցի ընտանեկան միջավայրի առկայության պայմաններում կարող են սերունդներին պահպանել տալ հայկական ինքնությունը:

Ցավոք, «սիմվոլիկ» հայի վերածվելը, ապա և ազգային ինքնությունը հետզհետե կորցնելը, հայ սփյուռքի ձուլման, անհետացման անբաժանելի, անխուսափելի և պատմական բոլոր ժամանակներով փորձված անկասելի ու պարտադիր գործընթաց են, որ կախում ունեն միայն ժամանակից՝ սերնդային աստիճանից և խառնամուսնությունների մակարդակից: Իսկ որ արդյունքը՝ ձուլումը, անշրջելի է բոլորի համար հավասարապես, դա անառարկելի է:

Ընդհանուր հաշվարկներով, եթե Հայոց ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ սփռված հայության շրջանում, առավելապես Արևմուտքի երկրներում, «սիմվոլիկ» հայության վերածման գործընթացը զգալի էր առավելապես երրորդ սերնդից, ապա նորանկախ Հայաստանից արտագաղթած հայության շրջանում այդ շեմը նվազելու միտում ունի:

Այսպես, Արևմուտքի երկրներում **դասական հայ սփյուռքի** սերունդների «սիմվոլիկացման» գործընթացի փոքր-ինչ ձգձգումը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Նախ, հակառակ Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության, բնօրրանի բռնազավթման և աշխարհով մեկ արևմտահայության սփռման փաստին, նրանց գիտակցության մեջ դեռևս պահպանվել էին զավթված Հայրենիքի՝ բնօրրանի, անաղարտ ընկալումը և հիշատակների պահպանման ու փոխանցման ձգտումը: Ուժացման որոշակի հապաղումը պայմանավորված էր նաև գոյատևած ու նոր միջավայրին և բարքերին դիմակայել փորձած ու տակավին դիմակայել փորձող (սակայն ժամանակի ընթացքում անխուսափելիորեն ընկրկած և հետզհետե ընկրկող) հայության առաջին և երկրորդ սերունդների կողմից ազգային ինքնության պահպանման համար գործադրված, գիտակցված անդուլ ջանքերով: Եվ վերջապես՝ համազգային շրջադարձային առիթներով (1965 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի հիշատակում, 1988 թ. Ղարաբաղյան շարժում, 1988 թ. Սպիտակի երկրաշարժ և այլն) Հայրենիքի շուրջ, ընդհանուր առմամբ, համախմբվածության դրսևորմամբ: Հիշյալ գործոնները ժամանակ առ ժամանակ ինչ-որ չափով սթափեցնող, լրացուցիչ լիցք են հաղորդել սփյուռքի ազգային ինքնության պահպանման ջանքերին՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով ինքնության վերագնահատման և ազգային արժեքների պահպանությունը համեմատաբար երկարաձգելու համար:

Միաժամանակ, քանակական և որակական առումներով հայ սփյուռքն արտաքուստ «թարմացնելու» տեսակետից նշանակալի դեր են կատարել և

շարունակում են կատարել Մերձավոր և Միջին Արևելքից, ինչպես նաև Հայկական ԽՍՀ-ից, ապա՝ ՀՀ-ից դեպի սփյուռքի երկրներ ժամանակ առ ժամանակ շարունակվող պարբերական արտագաղթերը՝ հայության նորանոր շերտեր զոհաբերելով «հալեցնող կաթսայի» ձուլարանին:

Մինչդեռ արտերկրում հայտնված **հայաստանցիների** պարագայում սերունդների «սիմվոլիկացման» համեմատաբար արագ ընթացքն իր հերթին բացատրվում է մի շարք հանգամանքներով: Նախ, դա պայմանավորված էր 1980-ական թթ. կեսերից ողջ ԽՍՀՄ տարածքում և մասնավորապես՝ Հայաստանում միաժամանակ սկսված պատմաքաղաքական լուրջ իրադարձություններով, սոցիալ-տնտեսական վիճակի անկումով, ինչպես նաև՝ հասարակության բարոյահոգեգիտակցական կյանքի արմատական ու շրջադարձային ձևափոխմամբ: Կենտրոնացված պետական համակարգի փոփոխության հետևանքով առաջացած անիշխանությամբ պայմանավորված հասարակական գործընթացների անորոշությունն ու ամենաթողության մթնոլորտը, ինչպես նաև զավթողական Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմի հարուցած անխուսափելի, հաճախ՝ արհեստածին դժվարությունները, սոցիալական անհեռանկարայնության զգացումները վերջ ի վերջո արտագաղթելու գիտակցություն են սկզբնավորել նաև արևելահայ որոշակի հավաքականության շրջանում: Բնականաբար, ապրուստի տարրական միջոցներից զրկված և հուսահատությունից կամ ավելի բարեկեցիկ կյանք ունենալու և այլ նպատակներով արտագաղթած, ինչպես նաև խարդախությունների հետևանքով արտերկիր փախուստի դիմած հայության տարբեր խավերի շրջանում ձևավորվել է նորանկախ Հայաստանի մի ընկալման, ինչը և հանգեցրել է օտարության մեջ ինքնության պահպանման նվազ նախանձախնդրության և նոր միջավայրին արագ համարկվելու (ինտեգրվելու) ձգտում: Վերջապես, որոշիչ դեր են խաղում նաև արտերկրի բարքերին ընդհանրապես և դասական հայ սփյուռքին մասնավորապես անձանոթ լինելու հանգամանքը, լեզվամտածողական, սոցիալ-մշակութային, ավանդույթաստվորութային և մի շարք այլ հանգամանքներ:

Նետևաբար, ժամանակի ընթացքում մշակութային ցնցում (*culture shock*), հուսահատություն ապրած, արտագաղթելու համար ամիսսած, ուժացման փաստի հետ ամեն օր առերեսվող և ժամանակի ընթացքում ինքնագիտակցության եկող, ինչպես նաև ազգային, ընտանեկան, մշակութային և այլ արժեքների առումով դեռևս ոչ լրիվ աղճատված, երբեմնի «հայաստանցու» համար հնարավորինս վաղ վերադարձը Հայրենիք (ինչին ավելի հաճախակի ենք ականատես լինում վերջին տարիներին երկրում քաղաքական ու տնտեսական կյանքի աստիճանաբար կայունանալուն զուգընթաց) շատ ավելի իրատեսական և հեռանկարային կարող է

լինել ընտանիքի, սերնդի պահպանման, ինչպես նաև Հայաստանի սոցիալ-տնտեսական և ռազմավարական շահերի տեսակետից:

Եվ քանի որ «հայապահպանությունը» սփյուռքում ընդհանուր առմամբ աննպատակ է, այսինքն՝ նպատակային, իրատեսական, գործնական հայրենասիրության հենք չունի, տվյալ դեպքում՝ **Հայաստանակենտրոն** չէ, ընդհակառակը՝ **«անհայրենիք»**⁵, հետևաբար, հիմնականում ծնողների դրդմամբ մեկօրյա կամ ամենօրյա հայկական դպրոց հաճախած և իր «պարտքը» ազգի նկատմամբ «մեծ զոհողությունների գնով» (ֆինանսական, հանգստի, ազատ ժամանակի հաշվին) իրականացրած երիտասարդ սերունդն ընդհանուր առմամբ արդեն կարող է իրեն թույլ տալ կյանքի մնացած հատվածն իր ուզած ձևով՝ օտար ամուսնություններով կամ ազատ տնօրինել: Խառնամուսնության հետևանքով խառնածին զավակների ծնունդները կզան համոզելու, որ ազգի, իրականում՝ Հայաստանի ու նրա ռազմավարական շահերի համար իրենք «անելիք չունեն», քանի որ դրան պատրաստված չեն, հետևաբար և՛ պարտավորված չեն: Ուստի, գլոբալ քաղաքացի լինելն ամենահարմար գաղափարախոսական ծածկն է դառնում երբեմնի «հայապահպանված» այդ խումբ հայերի համար, ինչը և նրանք դյուրությամբ ընտրում են որպես ինքնություն:

Այնպես որ, ժամանակի ու տարածության մեջ դիտելով, ինչպես նաև հաշվի առնելով առանձին բացառությունները՝ հատկապես Արևմուտքի երկրների հետզհետե «սիմվոլիկացող» հայերը Հայաստանի, նրա ռազմավարական և խնդրահարույց տարածաշրջանից բխող իրական շահերի համար գործնականում «ամորֆ», եթե չասենք՝ «վիճարկելի», հավաքականություն են դառնում, մշտապես ենթակա, պատրաստ և պարտավոր ծառայելու իրենց ապրած երկրների քաղաքական շահերին ու դոկտրինաներին՝ խնդիրներ հարուցելով Հայաստանի ազգային անվտանգության շահերին: Հանգամանք, որին անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները բազմիցս ականատես են եղել և լինում են հասարակական-քաղաքական և այլ ասպարեզներում ներգրավված արտ-երկրի որոշ հայրենակիցների կողմից: Բացառությունները հաշվի առնելով՝ նշենք, որ այս երևույթը բնորոշ է նաև առայժմ դեռ օտար ամուսնություն չկնքած, թե՛ արևմուտքի և թե՛ արևելքի երկրներում բնակվող, առավելապես ազգային կառույցների հետ առնչվող, այսպես կոչված՝ «հայապահպանված» (սփյուռքահայ, թե՛ նախկին հայաստանցի) հայության գերակշիռ մասին ևս, քանի որ ամենից առաջ և ամենից

⁵ Ավագյան Բ., «Անհայրենիք» հայապահպանության հեռանկարները սփյուռքում (Նոր Գլաձոր, Ե., 2013, էջ 287-300):

առավել նրանք իրենց երկրների քաղաքացիներն են՝ ուսում, կրթություն, աշխատանք, վարձատրություն են ստանում այնտեղ՝ դրանից բխող իրավունքներով ու պարտականություններով: Այս տեսակետից, աստիճանաբար գլոբալացվող հայ սփյուռքի որոշակի հատվածը (կուսակցական, կրթական, լրագրող, համակիր և այլն), իր բոլոր շերտերով (Հայոց ցեղասպանությունից առաջ և հետո արտագաղթածներ, նախկին հայրենադարձ արտագաղթյալներ, անկախ Հայաստանից արտագաղթածներ) և սերունդներով (հայ, ծագումով հայ) հանդերձ, Հայաստանի, ինչպես նաև նրա ռազմավարական գործընկեր երկրների շահերին հակադիր, միջազգային վերպետական կառույցների կամակատար հավաքականություն է դառնում⁶:

Այդ ամենը հնարավոր դարձավ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նախկին խորհրդային երկրներում (նաև Հայաստանում) «դեմոկրատիայի», «բացախոսության», «մարդու իրավունքների» անվան տակ կյանքի գրեթե բոլոր՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր, գիտական, կրթական, մշակութային և այլ ոլորտներ արտերկրից քողարկված ու բացահայտ՝ արևմտյան այլընտրանքային կեղծ արժեքների համաժամանակյա, հետևողական ու նպատակադրված ներթափանցման, ներխուժման պայմաններում:

Պարզ մի փաստ ինքնին խոսում է Հայոց ցեղասպանությունից հետո սփյուռքի վերածված մեր հայրենակիցների «հայապահպանվածության», այն է՝ համազգային առաջնահերթությունների հանդեպ համայնքային քաղաքական կառույցների կատարած աշխատանքի անարդյունավետության մասին: Այսպես, եթե XX դարասկզբին Կիլիկիայի ազատագրման նպատակով կամավորական շարժմանը մասնակցելու համար միայն ԱՄՆ-ից անդամագրվել էին 5.000 հայ⁷, ապա դարավերջին՝ Ղարաբաղյան շարժման տարիներին (1988-1994 թթ.) կամավորագրվել և ռազմական գործողություններին ոչ տևական մասնակցություն են ունեցել 11⁸, իսկ տևական՝ 3⁹ ամերիկահայ:

Անհամեմատելի է նաև Ղարաբաղյան շարժման տարիներին հայրենի բնօրրանի ազատագրմանը կամավորագրված սփյուռքահայերի ընդհանուր մասնակցությունը XX դարասկզբին՝ Առաջին աշխարհամարտի տարիներին, կովկասյան

⁶ Ավագյան Ք., Հողապահպանության և «անհայրենիք» հայապահպանության գաղափարների դրսևորումը ԱՄՆ-ի հայ համայնքում (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2014, № 2, էջ 41-57):

⁷ Տեղեկագիր Հայ ազգային միութեան Ամերիկայի. 1917-1921 թթ., Պոստոն, 1922, էջ 27:

⁸ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994. Հանրագիտարան, Ե., 2004, էջ 536:

⁹ Նույն տեղում, էջ 265-266, 481, 659:

կամավորական շարժմանը արտերկրի հայերի ընդհանուր ներգրավվածության հետ: Այսպես, եթե Առաջին աշխարհամարտին ԱՄՆ-ից, Եվրոպայից և աշխարհի տարբեր կողմերից (Ռուսաստան, Բուլղարիա, Ռումինիա, Եգիպտոս, Պարսկաստան և այլն¹⁰) Կովկաս էր ժամանել շուրջ 3.000 հայ, ապա Ղարաբաղյան պատերազմի ժամանակ ռազմական գործողություններին տևական մասնակցություն ունեցած սփյուռքահայ կամավորների ընդհանուր թիվը չի գերազանցել երկու տասնյակը, իսկ ոչ տևական մասնակցություն ունեցածներինը՝ 120-ը¹¹: Ըստ պաշտոնական տվյալների, «Շուշիի առանձնակի գումարտակում», որն ստեղծվել է 1992 թ. սեպտեմբերի 1-ին մինչ այդ կազմավորված՝ ՀՅԴ կուսակցության կամավորական ջոկատների հիմքի վրա, պարբերաբար համալրվել է 118 սփյուռքահայ կամավորներով, ընդ որում, բուն արտերկրից՝ 64 (Լիբանան՝ 23, ԱՄՆ՝ 11, Իրան՝ 9, Կանադա՝ 7, Ֆրանսիա՝ 7, Միքիա՝ 6, Իտալիա՝ 1), նախկին ԽՍՀՄ տարածքից՝ 54 (Ջավախք՝ 45, Վրաստան՝ 6, Ռուսաստան՝ 3)¹²:

Սփյուռքահայ կամավորներից շատերը հիմնականում Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի [ASALA - Armenian Secret Army for the Liberation of Armenia (1975 թ.)] երբեմնի անդամներն էին կամ՝ պատմական արդար հատուցման հույսով և ազգային ոտնահարված արժանապատվության վերականգնման վրեժով լցված ողջախոհ ու նվիրյալ հայորդիներ, որոնք, հիմնականում լինելով 1970-ականի Մերձավոր Արևելքի պատերազմներում թըրծված սերունդ, ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից դեպի ԱՄՆ և այլուր կրկնազաղթածներ կամ նրանց ժառանգներ, դեռևս պահպանում էին Առաջին աշխարհամարտի տարիներին հայ կամավորական շարժման հերոսական ավանդույթների հիշողությունը և Հայաստանը ազատագրված ու միասնական տեսնելու նվիրական երազանքը:

Սփյուռքի մեր հայրենակիցների շրջանում հողապահպանության ձգտումների նվազումը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, նույնպես և սուբյեկտիվ հանգամանքներով: Նախ՝ օտար միջավայրում, սերնդափոխությանը զուգընթաց, բնօրրանի գիտակցությունը օբյեկտիվորեն միտված է թուլացման, մանավանդ այն պարագայում, երբ համայնքային կառույցների ազգային դաստիարակության գաղափարախոսական հենքը իրատեսական չէ: Տվյալ դեպքում Հայոց ցեղասպանությունից հետո հայ սփյուռքի մի զգալի հատվածի հայապահպան

¹⁰ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916 թթ.), Ե., 1965, էջ 187: Լազեան Գ., Հայաստանը և Հայ Դատը ըստ դաշնագրերու, Գահիրե, 1942, էջ 81:

¹¹ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան, էջ 536:

¹² Նույն տեղում:

ջանքերը հանգրվանած երկրներում կրել են զգացական, խորհրդանշական, «անհայրենիք» բնույթ, քանի որ պատմաքաղաքական հանգամանքների բերումով հայրե-նագրկված հավաքականությունը տասնամյակներ շարունակ չի ունեցել որոշակի իրատեսական՝ հողապահպանության գաղափարա-խոսական հենք, հակառակ Խորհրդային Հայաստանի՝ որպես Մայր Հայրենիքի փաստացի գոյության: Ընդհակառակը, առանձին դեպքերում, փորձեր են արվել իրատեսական՝ հայաստանակենտրոն գաղափարախոսությանը հակադրել պասիվ ազգապահպանությունը, որի ջատագովները դեռևս 1920-ական թթ. սկզբին արդեն շրջանառության մեջ էին դրել, այսպես կոչված, «բարոյական պետություն», «անհայրենիք պետություն», «հոգևոր հայրենիք» հասկացությունները¹³, փորձելով հիմնավորել, թե՛ «հայրենիքը չէ բացառաբար, որ հիմ պիտի դառնա որևէ հավաքականության ամբողջացման, պահպանման և իրավական գոյության», հայրենիքի դերը կարող է կատարել «ազգությունը, որ իր շուրջն է համախմբում բոլոր նրանց, որոնք միննույն ազգի պատկանելության զգացումը ունեն»¹⁴: Ըստ նրանց, յուրաքանչյուր գաղութահայ հյուրընկալ երկրի նկատմամբ իր պարտականությունները պիտի կատարեր «առանց երբեք իր որևէ քայլին ազգային (հայկական) կերպարանք տալու և իր պայքարը կապելու մայր հայրենիքի (Հայաստանի) ճակատագրին»¹⁵: Այսպիսով, արևմտյան հակախորհրդային քարոզչությանը տուրք տալը, բնական է, որ նպաստավոր պայմաններ է ստեղծել սփյուռքի մեր հայրենակիցների գերակշիռ մասի մեջ հատվածային, տեղային և կամ՝ ընտրովի ինքնության ձևավորման ու արմատավորման համար:

Թեև այսօր աշխարհում առկա է ավելի քան 10 միլիոնանոց հայ սփյուռք, և հակառակ այն բանին, որ 1985 թ. հետո Խորհրդային Միությունում տեղի ունեցող ազատականացման գործընթացները, ապա 1991 թ. ազատ և անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծումը պետք է որ ոգևորեին նաև տասնամյակներ շարունակ «Կարմիր Հայրենիքից» պաղած ազգային կառույցները, այդուհանդերձ, կանխակալ հանգամանքներից ելնելով, համահամայնքային համակարգված հողապահպան գործունեություն այդպես էլ չի իրականացվել:

Այդ առումով, Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներից ի վեր զգալի նահանջ է արձանագրել նաև սփյուռքի՝ նախկինում քիչ թե շատ կազմակերպված համահամայնքային աջակցությունը հայրենի երկրին: Այդ ամենը հնարավոր դարձավ որպես հետևանք արտերկրում տասնամյակներ շարունակ

¹³ Թովուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Ե., 1978, էջ 249-250:

¹⁴ Նույն տեղում, էջ 250:

¹⁵ Նույն տեղում:

սփյուռքի առանձին կառույցների ծավալած հակախորհրդային քարոզչության և օտար կառույցների հետ սերտ գործակցության [1930-ական թթ. «անհայրենիք» պետության ստեղծման գաղափարախոսության սկզբնավորում, 1946 թ. մեկնարկած «Մառը պատերազմ», 1948 թ. ԱՄՆ-ում Հայրենագուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտեի՝ ԱՆՉԱ-յի (American National Committee to Aid Homeless Armenians - ANCHA) ստեղծումով ավելի քան 4.500 տարագիր հայերի փոխադրում ու բնակեցում ամերիկյան հողում¹⁶, ապա նաև՝ 1960-1970-ական թթ. ԱՆՉԱ-յի գործունեության վերականգնումով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից, ինչպես նաև Խորհրդային Հայաստանից 18.500 հայերի տեղափոխումը ԱՄՆ¹⁷ և այլն]:

Սփյուռքահայերի մասնակցությունն ու աջակցությունը Ար-ցախյան ազատամարտին շատ ավելին կարող էին լինել, եթե անհատ նվիրյալներից բացի, սփյուռքի քաղաքական կառույցները ևս, որոնք կոչված են համախմբել հայությանն ազգային գերխնդիրների շուրջ, կազմակերպեին իրենց համայնքն անցյալ դարասկզբի հայ կամավորական՝ Կովկասյան և Կիլիկյան շարժումների օրինակով և սատարեին գերության մեջ գտնվող պատմական Հայրենիքի մի հատվածն ազատագրելու Մայր Հայաստանի ջանքերին:

Այդ մասին իրենց վրդովմունքն են արտահայտել նաև արտերկրից, մասնավորապես՝ ԱՄՆ-ից, ժամանած հայազգի կամավորները, որոնք արևմտահայության հայրենագրկման հետևանքով սփյուռքի վերածված հայության առավելապես երրորդ և արևմտյան գլոբալացնող իրականության պայմաններում ազգային ինքնության հիմնական տարրերի պահպանման առումով, ըստ էության, սահմանագծային՝ վերջին սերնդի ներկայացուցիչներն էին (տե՛ս աղ. 1):

Այսպես, քաջարի ու անձնուրաց կամավորի, հրամանատարի առասպելական տիպար, 1990 թ. Արցախի պաշտպանությանը զինվորագրված Մոնթե (Ավո) Մելքոնյանը¹⁸ (1957 թ., ԱՄՆ - 1993 թ., ԼՂՀ) հայրենի հողի ազատագրումը համարում

¹⁶ Barsumian N., *Stowaway to Heaven. Ohio, 1961, p. 151.*

¹⁷ Հայ սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 37:

¹⁸ Հիշեցնենք, որ ամերիկահայ Մոնթե (Ավո) Մելքոնյանի ղեկավարության ներքո միմիայն հաղթանակներ են արձանագրվել, և՛ ոչ մի պարտություն: 1991 թ. նա հիմնել էր «Հայրենասիրական ջոկատը», իսկ արդեն 1992 թ. նրան էր վստահված Մարտունու շրջանի շտաբի պետի պարտականությունը, պաշտպանական շրջանի հրամանատարն էր: Մ. Մելքոնյանը մասնակցել է ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի (Էրթեջ, Բուզլուխ, Մանաշիդ, Գարաչինար), Մարտա-կերտի, Մարտունու շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: 1992 թ. սեպտեմբերին, 1993 թ. մարտ, մայիս, հունիս ամիսներին Մ. Մելքոնյանի ղեկավարությամբ ազատագրվել են նաև Մարտունու, Քարվաճառի, Աղդամի շրջանները և այլն: Արցախի ազատագրման գործում իր անօրինակ սխրագործությունների համար նա հետմահու արժանացել է

էր յուրաքանչյուր հայի սրբազան պարտականությունը. «Նորմալ բան է, որ հայը գա և իր հայրենիքը պաշտպանե: Շատ նորմալ բան է: Իրավունքն է բոլորին ու նաև պարտականությունն է: Եվ զարմանալին այն է, որ ավելի շատ հայերը չեն եկած նույնը ընելու: Միայն ադ է զարմանալի: Ոչ թե զարմանալի է, որ մեկը կուգա և կընե, այլ զարմանալին ան է, որ մեկը՝ չընե: Ինչ որ է... Շատ պիտի ուզենայի, որ թե՛ Հայաստանեն ավելի մարդիկ գան, թե՛ սիյուռքեն: Այսինքն, ինչքան հայ կա՝ իսկական հայրենասերներ, իրենց տեղը այսօր, այսօրվա դրությամբ այստեղ է՝ Արցախի մեջ է», քանի որ՝ «Եթե մենք կորցնենք Արցախը, կփակենք հայ ժողովրդի պատմության վերջին էջը»¹⁹:

Բնութագրական է նաև ՀՅԴ նախկին անդամ, «Իմ կուսակցությունը իմ երկիրն է» նշանաբանով առաջնորդվող հերոս հրամանատար Կարո Քահքեջյանի²⁰ (1962 թ., Միրիա - 1993 թ., ԼՂՀ) դատապարտող խոսքերը՝ ուղղված ազգային ավելի քան մեկդարյա տարեգրություն ունեցող կուսակցությանը. «Դո՛ւք մեզ ստրվեցուցիք. ձեր պատրաստ[ած] զինուորներն ենք մենք: Ինչո՞ւ մեզ չեք թողնում գնանք Ղարաբաղ: Կարո՞ղ է էնտեղի դաշնակցականների երդումը տարբեր է մեր երդումից: Ես ալ դաշնակցական զինուոր եմ: Դո՛ւք մեզ ստրվեցուցիք դաշնակցական յեղափոխական երգերը, մեզ ասացիք՝ դուք Անդրանիկ էք դառնալու, Գեորգ Չաուշ էք դառնալու. Ազգին ծառայեցէ՛ք: Օրը եկել է, ժամանակը եկել է, հիմա ասում էք՝ մի՛ գնա: Էդ մեկը չեմ կարողանում [հասկանալ]...»²¹:

Արցախյան ազատամարտի բովով անցած և ազգի տառապանքով ու հաղթանակներով թրծված շատ ու շատ սիյուռքահայ կամավորների համար այլևս

Հայաստանի ազգային հերոսի, Արցախի ազգային հերոսի, ՀՀ բանակի փոխգնդապետի (1994 թ.) կոչումների, ինչպես նաև պարգևատրվել՝ ՀՀ «Հայրենիք», ԼՂՀ «Ոսկե արծիվ», «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններով: «Իմ կենացը մի խմեք, այլ՝ իմ գործը շարունակեք», - ասում էր Մոնթեն (Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, էջ 481: Տե՛ս նաև http://en.wikipedia.org/wiki/Monte_Melkonian):

¹⁹ <http://www.kentron.tv/index.php/am/news/item/2421-news-2511> (Այսօր Մոնթեի ծննդյան օրն է, 25 նոյեմբերի, 2013):

²⁰ Հերոսաբար զոհված հրամանատար ֆրեզնոյաբնակ Կարո Քահքեջյանը (Մպիտակ Արջ) 1991 թ. Երևանում կազմել և ղեկավարել է «Խաչակիրներ ջոկատը», որն անուրանալի հաջողություններ է արձանագրել պատերազմում. մինչև 1993 թ. մասնակցել է ՀՀ Արարատի, Տավուշի, ԼՂՀ Ասկերանի, Մարտակերտի, Լաչինի, Քելբաջարի, Շահումյանի, Շուշիի շրջանների, Բերդաձորի ենթաշրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին, հաջողությամբ իրականացրել հետախուզական առաջադրանքներ, արտերկրից Արցախ է տեղափոխել մեծ քանակությամբ մարդասիրական օգնություն և դեղորայք (Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, էջ 265-266, 659: Տե՛ս նաև http://en.wikipedia.org/wiki/Garo_Kahkejian):

²¹ Պետրոսեան Ա., Սիւիւռքահայերը մարտադաշտի վրայ. Խաչակիրներ ջոկատը, Ե., 2000, էջ 72-73:

դժվար է եղել հետ՝ օտար աշխարհ վերադառնալը, հետևաբար, նրանցից շատերը գիտակցաբար հաստատվել են Հայրենիքում՝ այժմ արդեն խաղաղ պայմաններում երկրին իրենց նպաստը բերելու նպատակադրումով:

Այսպես, Արցախյան պատերազմում անձնուրաց կռված ամերիկահայ լուսանջեկեսարնակ Շահե Աճեմյանը (1962 թ., Բեյրութ), որը «Խաչակիրներ ջոկատի» փոխհրամանատարն էր²², Հայաստանում հաստատվելու իր որոշման մասին ասում է. «Ես վերջնականապես հաստատվել կարողացա միայն 1999 թ.-ին, երբ հասկացա, որ սիրտս Հայաստանում եմ թողել և չեմ ընտելանում այլևս ամերիկյան հոգեբանության ու մարդկանց հետ: ...Ինձ առանց Հայաստան չեմ պատկերացնում այլևս, իմ վերջին վայրկյանն էլ այստեղ եմ սպառելու: ...Չեմ հիասթափվում, ինձ Հայրենիքի նկատմամբ կոտրելը դյուրին չէ»²³:

Անշուշտ, Արևմուտքի ծավալապաշտական շահերը մշտապես եղել և շարունակում են մնալ այս տարածաշրջանի (Մերձավոր, Միջին Արևելք, Ռուսաստան նաև՝ Հայաստան և այլն, բացառությամբ՝ Թուրքիայի և Իսրայելի) քաղաքական շահերին հակադիր: Հետևաբար, սփյուռքի և Հայաստանի հետ հարաբերությունները մշտապես եղել և մնում են հենց այդ հանգամանքի վրա խարսխված՝ դրանցից բխող բոլոր հետևանքներով: Ահա թե ինչու Հայաստանում քաղաքական կարգերի փոփոխությունը՝ խորհրդայինից դեպի անկախ հասարակարգ, էական և շրջադարձային փոփոխություն չմտցրեց Հայրենիքի նկատմամբ սփյուռքի մեր հայրենակիցների համազգային վերաբերմունքի մեջ և մնաց քաղաքականացված: Ընդհակառակը, եթե խորհրդային հասարակարգի օրոք պարզ էր, թե սփյուռքի որ հատվածն է կողմնորոշված դեպի Հայաստան (ՌԱԿ, ՄԴՀԿ, չեզոքներ և այլն), իսկ որը՝ ոչ (ՀՅԴ), ապա անկախ Հայաստանի պայմաններում սփյուռքահայ քաղաքական ուժերը և նրանց հովանավորության ներքո գործող համայնքային կառույցները (առանձին բացառություններով) գրեթե միատարր, միախոհ, միաբերան, եթե չասենք՝ հավաքականորեն «դիրքորոշված» են Հայաստանի խնդիրների նկատմամբ: Ընդամին, այդ «դիրքորոշումները» միշտ չէ, որ համընկնում են Հայաստանի և տարածաշրջանում նրա ռազմավարական գործընկեր երկրների տնտեսական, քաղաքական, ռազմավարական շահերի առաջնահերթություններին:

²² <https://www.youtube.com/watch?v=X4mjxyfQxpU> (Հ1, ԶինՈւժ - Հարցազրույց «Խաչակիրներ» ջոկատի փոխհրամանատար Շահե Աճեմյանի հետ): <https://www.youtube.com/watch?v=Kae4hxzell0> (Նվիրվում է «Խաչակիրներ» ջոկատի փոխհրամանատար Շահե Աճեմյանի ծննդյան 50-ամյակին):

²³ <https://www.facebook.com/photo.php?fbid=420364954776280&set=a.105411196271659.10922.100004083370590&type=1&theater> (Shahe A. Ajemian, February 23, 2014).

Այս պայմաններում ի չիք է դառնում նաև սփյուռքում նպատակային ու գործնական «հայապահպանություն» իրականացնելու արդյունավետությունը՝ ընդհանուր առմամբ այն վերածելով անվերջանալի, ժամանակատար և խիստ ծախսատար, ինքնանպատակ լոբբիստական գործունեության, որը, մեծ հաշվով, հարկ եղած դեպքում, քաղաքական, իրավական առումներով, միննույն է, անտեսվում է միջազգային կառույցների կողմից՝ որպես իրենց «քաղաքական նպատակահարմարությանը», իսկ իրականում՝ իրենց համընդհանուր աշխարհաքաղաքական ծրագրերին հակասող փաստարկ²⁴:

Կարծում ենք՝ իրական **հայապահպանության** միակ սևեռուն նպատակը մշտապես պետք է լինեն սփյուռքահայ սերունդներին գաղափարապես, ֆիզիկապես և նյութապես **նախապատրաստելը, ուղղորդելը** բացառապես Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև՝ ազատագրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ Արցախ, **անսակարկ զանգվածային հայրենադարձության**, այն է՝ **տունդարձի**: Միաժամանակ, հարկ է ջանքեր գործադրել՝ հասկա-նայու ժամանակաշրջանի հետ կապված անխուսափելի դժվարություններ դիմագրավող, հաղթահարող ու մաքառող Հայրենիքին ու նրա ժողովրդին, և հարմարվել, մերվել հայրենի միջավայրին:

Եվ քանի որ **իրատեսական հայապահպանության** հիմքում հայրենասիրությունն է, հետևաբար հարկ է նաև գործնականում անմնացորդ աջակցել **միակ** Հայրենիքին՝ գաղափարական խորը համոզումով նպատակային, լայնածավալ **ռազմավարական ներդրումներ** (տնտեսություն, բնակարանաշինություն և այլն) **իրականացնելով**, ի շահ երկրի զարգացման ու առաջընթացի:

Հակառակ դեպքում, սփյուռքը՝ որպես ազգային կարևորություն ներկայացնող հավաքականություն, իր աննպատակ և ապարդյուն «հայապահպանությամբ»,

²⁴ Այսպես, 2008 թ. փետրվարի 17-ին Կոստվոյի այբանական իշխանությունների կողմից երկրամասի՝ Սերբիայից անկախանալու փաստը, առանց տևական լոբբիստական գործունեության, անմիջապես ճանաչել են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան, ինչպես նաև ՄԱԿ-ի անդամ 64 պետություններ: Իսկ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամներ Ռուսաստանը և Չինաստանը, ընդհակառակը, իրենց համերաշխությունն են հայտնել Սերբիային [Սարյան Ս., Կոստվոյի խնդրի վերաբերյալ, 24.09.2010 <http://www.noravank.am/arm/-articles/detail.php?ELEMENTID=5041>]: Այդ գործարքը հնարավոր դարձավ, քանի որ գերազանցապես քրիստոնյա բնակչություն ունեցող Սերբիայի կազմում այբանացի մահմեդականների կողմից անկախ վարչական միավորի ստեղծումն ու պաշտպանությունը ռազմավարական կարևորություն ներկայացնող տարածքները քրիստոնեթափելու՝ միջազգային կառույցների «աշխարհաքաղաքական նպատակահարմարության» առանցքային մասն են կազմում:

հարափոփոխի աշխարհաքաղաքական պայմաններում դատապարտված է ձուլման ու անհետացման:

Մինչդեռ հողապահպանությունն է ազգապահպանության հենքն ու մշտնջենականության պայմանը, հետևաբար հայապահպանությունն առանց հողապահպանության անիմաստ է:

**ПЕРСПЕКТИВЫ СМЕНЫ ПОКОЛЕНИЙ В ДИАСПОРЕ
АВАКЯН К. Р.**

Резюме

Смена поколений происходит через каждые 20-25 лет. В результате на протяжении столетия наблюдается резкая (в западных странах) и постепенная (в восточных странах) ассимиляция армян в диаспоре. Последствия ассимиляции сказались и на уменьшении числа зарубежных армян, участвовавших в добровольческих движениях за освобождение родной земли начиная с Первой мировой войны и кончая освободительной войной в Арцахе.

И тем самым сохранение армянства в диаспоре, не преследующее сохранения Родины, в сущности становится самоцелью, теряя всякий смысл, а последующие поколения зарубежных армян являют собой некую “аморфную”, если не сказать “спорную” с точки зрения национальной безопасности Армении общность.

**THE PERSPECTIVES OF GENERATION CHANGES
IN THE DIASPORA
K. AVAGYAN**

Abstract

Generation changes take place through every 20-25 years. As a result, over a century it leads to a drastic (in the Western countries) and gradual (in the Eastern countries) assimilation of the Armenians in the Diaspora. The aftermath has been reflected also by the dynamics of decrease of participation of Armenians from abroad to the voluntary movements for the liberation of native land beginning from the First World War to the liberation war in Karabagh.

Thus, in general, preserving Armenianness in the Diaspora, without preserving Fatherland, is becoming autotelic, aimless deed, and the successive generations of Armenians in the foreign countries are transforming into “amorphous,” if not to say “questionable” entity from the viewpoint of Armenia’s national security.

Meanwhile, the realistic and efficient preserving Armenianness – is preserving Fatherland.